

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Իշխանը
հովիւ կը
դառնայ



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot; Lazarus

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.





Օրին մեկը Մովսես տեսաւ,
որ եգիպտացի մը հրեայ
ծառայի մը կը ծեծէ:
Թեւ Մովսես իբրեւ
իշխան մեծցած եւ
դաստիարակուած
էր փառաւոնին
պալատին
մէջ, ինքն ալ
հրեայ էր:
Պետք էր,

որ օգնէր
ծառային:



Շուրջը նայեցաւ, որպէսզի վստահ ըլլայ, որ որեւէ մէկը չի տեսներ, Մովսէս յարձակեցաւ ծառային անխիղճ տիրոջ վրայ: Կռուի ընթացքին Մովսէս սպաննեց եգիպտացին: Անոր մարմինը շուտով թաղեցին:



Յաջորդ օրը, Մովսես տեսաւ, որ երկու հրեաներ կը
կռուին: Ան փորձեց անոնց կասեցնել: Մէկը ըսաւ.
"ինձի՞ ալ պիտի մեռցնես, ինչպէս որ եգիպտացիին
մեռցուցիր": Մովսես շատ վախցաւ: Ամէն մարդ
գիտեր երեկուան մասին: Փառաւոնն ալ գիտեր:
Մովսես պետք էր, որ փախչէր: Ան Միտեայ
կոչուող երկիրը
գնաց:




Մինչ Մովսես կը հանգչեր ջրիորին մօտ, Միտիանի քահանային եօթը աղջիկները դուռերը կը լեցնէին ջուրով իրենց հօր հոտին համար:



Ուրիշ հոպիւներ փորձեցին անոնց կողմ քաշել:
Մովսէս պաշտպանեց եւ օգնեց կիներուն:





"Շուտ տուն դարձաք", Ռագուելի,
աղջիկներուն հայրը զարմանքով
հարցուց: Երբ աղջիկները
բացատրեցին պատճառը,
ան ըսաւ. "Հոս
բերեք այդ մարդը":
Մովսէս ապրեցաւ
Ռագուելի հետ,
որ ճէդրօ կը

կոչուէր: Յետոյ
Մովսէս ամուսնացաւ
Ռագուելի անդրանիկ
աղջկան հետ:



Եգիպտոսի մէջ, փառաւոն
մահացաւ: Աստուծոյ
ժողովուրդը, հրեաները,
տակաւին ծառաներ էին:



Անոք իրենց
տանջանքներուն մէջ կը
ճմլուէին: Սաստիկ ձեռով
կ'աղօթէին Աստուծոյ
օգնութեան համար:

Աստուած լսեց
անոնց աղօթքները:



Մովսէս լուր չունէր, սակայն
Աստուած կը ծրագրէր, զինք
թագաւոր հռչակել, օգնելու
գերի հրեաներ: Քառասուն
տարի անցան Մովսէսի
Եգիպտոսէն հեռանալուն:
Ան Ռագուէլի հովին էր:



Բայց

շատ կը կարօտնար իր
ժողովուրդին Եգիպտոսի մէջ:

Օրին մէկը մօտերը Մովսէս թուփ
մը նկատեց, որ կրակ առած
կ'այրեր: Սակայն կրակը
թափով չէր այրեր: Մովսէս
որոշեց գիտնալ անոր
պատճառը:



Երբ Մոսեսը կը մօտենար, Աստուած զինք
կանչեց թուփին մէջէն: "Մոսես": "Ես հոս
եմ" ըսաւ Մոսես "Շատ մի մօտենար", ըսաւ
Աստուած: "Ոտնամաններդ հանէ, որովհետեւ
հողը, որուն վրայ ես, սուրբ գետին է":



"Ես քեզի փառաւոնին պիտի ղրկեմ, որ
իմ ժողովուրդս Եգիպտոսէն դուրս բերես",
ըսաւ Աստուած: Բայց Մովսէս կը վախնար
հոն երթալ:



Ետքը Աստուած Մովսէսի ցոյց տուաւ
իր հզօր ուժը: Ան Մովսէսին
ցուպը օձի վերածեց:



Երբ Մովսես օձը վերցուց պոչէն, օձը անգամ
մը եւս ցուպ դարձաւ: Աստուած ուրիշ նշան
մըն ալ տուաւ:




"Կուրծքիդ դիր երկու ձեռքերդ": Ան
հրամայեց: Մոպսես այդպես ըրավ: Իր ձեռքերը
ճերմակ բորոտներու
վերածուեցան:



Երբ նորեն կրկնեց, անոր ձեռքերը բժշկուեցան:



Տակաւին Մովսէս արարկեց: "Ես լաւ չեմ
խօսիր", ան ըսաւ Աստուծոյ: Աստուած զայրացաւ:
"Ես Ահարոն քու եղբայրդ պիտի օգտագործեմ,
որպէսզի քու ըսելիք խօսքերդ խօսի", ըսաւ ան:



Մովսես ճեղրոյին դարձաւ, հաւաքեց առարկաները
եւ Եգիպտոս մեկնեցաւ:



Աստուած առաջնորդեց
Մովսէսին եղբայրը Ահարոն,
որպէսզի հանդիպի
Մովսէսին, լերան վրայ:
Մովսէս Ահարոնի պատմեց
ամէն ինչ, որ Աստուած
որոշած էր հրեայ
ժողովուրդը
դուրս հանելու
Եգիպտոսէն:



Միասին անոնք լուրը
փոխանցեցին հրեայ
առաջնորդներուն: Երբ
Մովսէս ցոյց տուաւ
նշանները ծերերուն:
Անոնք գիտցան, որ
Աստուած պիտի
օգնէ իրենց:




Միասին, խոնարհեցան
պաշտելու:




Մովսէս եւ Ահարոն գաղտնօրէն
գացին փառաւոնին. Աստուած կ'ըսէ.
"Զգէ՛ իմ ժողովուրդս թող երթայ
ազատ", անոնք ըսին անոր:



"Ես չեմ ձգեր, որ Իսրայել երթայ",
պատասխանեց փառաւոն: Ան չէր
ենթարկուեր Աստուծոյ:



Աստուած իր հզօր ուժը պիտի
օգտագործէր փոխելու համար
փառաւոնին միտքը:



Իշխանը հովիւ կը դառնայ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 2 - 5

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

